ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/64

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10111-18 գրությամբ «ՍԵԳ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00878823/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 31.05.2018թ. թիվ 01/29-650 գրության հիման վրա, 05.06.2018թ. նախաձեռնել է «ՍԵԳ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 31.05.2018թ. թիվ 01/29-650 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ գնորդ) և «ՍԵԳ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ վաճառող) միջև 29.03.2018թ. կնքված ՈՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ՀՏ-2-5 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն վաճառողը պարտավոր է մինչև 2018թ. ապրիլի 25-ը գնորդին մատակարարել 10 անվանում համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր 875,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով, սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ վաճառողի կողմից մատակարարված ապրանքներից մեկ անվանում՝ 162,000 ՀՀ դրամ արժողությամբ չի ընդունվել պայմանագրով նախատեսված ապրանքային անվանման անհամապատասխանության պատճառով: Գնորդը վաճառողին տրամադրել է պայմանագրով նախատեսված ողջամիտ ժամկետում թերությունները շտկելու համար, վաճառողը այդպես էլ չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Գնորդը ծանուցել է վաճառողին 5 բանկային օրվա ընթացքում համապատասխան հաշվեհամարին փոխանցել 810,0 ՀՀ դրամ տուգանքի գումարը՝ համաձայն ՈՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ՀՏ-2-5 պայմանագրի 6.3 կետի»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՍԵԳ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «ՍԵԳ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10111-18 գրությամբ

Խորհրդում նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Վանիկ Սեփոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10111-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 31.05.2018թ. թիվ 01/29-650 գրությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՍԵԳ» ՍՊԸ-ին միջև 29.03.2018թ. կնքված ՈՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ՀՏ-2-5 ծածկագրով գնման պայմանագիրը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի «ՍԵԳ» ՍՊԸ-ին 29.05.2018թ. թիվ 17/640 գրությունը, Ընկերության տնօրենի հայտնած դիրքորոշումը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՍԵԳ» ՍՊԸ-ին միջև 29.03.2018թ. կնքված ՈՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ՀՏ-2-5 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր)՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և հասցեով Գնորդին մատակակարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր, գնման-վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե մատակարարվել է անպատշաճ որակի՝ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում;

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

- 5.1 կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրությամբ: Ապրանքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
- 5.3 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

- 8.11 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը նույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների Տեխնիկական բնութագիր, գնման-վճարման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին մատակարարել 10 անվանում համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր, այդ թվում՝ թվով 3 հատ «մայրական սալիկ Foxconn P8H61-G» (ծագման երկիրը՝ Չինաստան):

Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 875,000 ՀՀ դրամ:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՍԵԳ» ՍՊԸ-ի միջև 23.04.2018թ. երկկողմանի ստորագրվել է ապրանքների մատակարարման փաստը ֆիքսող հանձնման-ընդունման արձանագրությունը, որով Ընկերություն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին է հանձնել Պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները՝ 713,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով, բացառությամբ թվով 3 հատ «մայրական սալիկ Foxconn P8H61-G» ապրանքի:

29.04.2018թ. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը թիվ 17/640 գրությամբ դիմել է «ՍԵԳ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ ՈՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ՀՏ-2-5 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վաճառողը պարտավոր է մինչև 2018թ. ապրիլի 25-ը գնորդին մատակարարել 10 անվանում համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր 875,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով, սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Ընկերության կողմից մատակարարված ապրանքներից մեկ անվանում՝ 162,000 ՀՀ դրամ արժողությամբ, չի ընդունվել պայմանագրով նախատեսված ապրանքային անվանման անհամապատասխանության պատճառով:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին Ընկերության տնօրենը հայտնեց, որ 23.04.2018թ. ապրանքների մատակարարման փաստը ֆիքսող հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելուց հետո, Ընկերության կողմից Պատվիրատուին է ներկայացվել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան թվով 3 հատ «մայրական սալիկ Foxconn P8H61-G» ապրանքատեսակները, որոնք սակայն

Պատվիրատուի կողմից չեն ընդունվել, և կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվել:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք Պատվիրատուի կողմից վերջինս ստացել է մատակարարված ապրանքը՝ Պայմանագրի պայմաններին չհամապատասխանելու, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ողջամիտ ժամկետում այդ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ գրավոր ծանուցում, Ընկերության տնօրենը պատասխանեց, որ նման ծանուցում Ընկերությունը չի ստացել:

Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Ընկերությունը չի ստացել նաև Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ Պատվիրատուի գրավոր ծանուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը չի ընդունել Ընկերության կողմից վերջինիս ներկայացված՝ Պայմանագրով նախատեսված թվով 3 հատ «մայրական սալիկ Foxconn P8H61-G» ապրանքը, սակայն նշված ապրանքը՝ Պայմանագրի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ չընդունելու վերաբերյալ որևէ գրավոր ծանուցում Ընկերությանը չի տրամադրել:

- Պատվիրատուն Ընկերությանը չի ներկայացրել Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ գրավոր ծանուցում:

Ուսումնասիրելով www.procurement.am կայքի «Պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնի հրապարակումները՝ Բողոքներ քննող անձը պարզեց, որ Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որևէ ծանուցում հրապարակված չէ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ ընթացակարգի քննության շրջանակներում Պատվիրատուի կողմից չներկայացվեցին բավարար ապացույցներ առ այն, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Հաշվի առնելով, որ Պատվիրատուն Ընկերությանը չի ներկայացրել Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ գրավոր ծանուցումը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով՝ մատակարարման պայմանագիրը չի կարող համարվել փոփոխված կամ լուծված, այսինքն, բացակայում է

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍԵԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10111-18 գրությամբ «ՍԵԳ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00878823/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ